Ավետիք Իսահակյան

Եղնիկները լուսաբացին

Եղնիկները լուսաբացին
Սուր ժեռերով անցկեցան,
Փրփրած լճին մեղմ նայեցին,
Լռիկ – մնջիկ անցկեցան:

Ա՜խ, իմ սերս՝ կանանչ – կարմիր,
Դառավ ինձի ցավ ու ցեց.
Ա՜խ, իմ կյանքս՝ զառ – վառ կարմիր,
Վիշտս կերավ ու մաշեց:

Ես ի՞նչ անեմ, ես ո՞ւր չքվիմ –
Ընկնիմ չոլերն ամայի. –
Երնե՜կ մեռնիմ, ու սիրտս ուտեն
Գել ու գազան ամեհի:

Ա՜խ, եղնիկներ, դադար չունեմ,
Սիրտս՝ կրակ վառ – վառման,
Մարդիկ կուգան, ինձ կնայեն
Լռիկ – մնջիկ կանց կենան …

1897
Ալեքսանդրապոլ